

ԱՆՆԱ ԱԲԱՋՅԱՆ. Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, *Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 444 էջ:*

Սույն աշխատությունը բաղկացած է առաջաբանից, երեք մասերից՝ համապատասխան գլուխներով, եզրակացություններից և գրականության ցանկից:

Առաջաբանում ըստ պատշաճի ներկայացված են քննության ենթակա հիմնախնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը, հայեցակարգը, ելակետային սկզբունքները, աշխատանքի նպատակադրումը, արդիականությունը, տեսական ու գործնական նշանակությունը: Անդրադարձ կա և մի շարք այլ հարակից հարցերի: Առաջին մասն ընդգրկում է երեք գլուխ, որոնցում հաջորդաբար հետազոտված են գրաբարի հոլովներն ու հոլովումները և դրանց ըմբռնումը՝ ա) ըստ հունարան դպրոցի քերականների, բ) ըստ լատինարան դպրոցի քերականների, գ) ըստ անկախ կամ, ինչպես ավանդաբար ընդունված է կոչել, ինքնատիպ քերականությունների լուսաբանման: Երկրորդ մասում հեղինակը քննության նյութ է դարձրել միջին հայերենի հոլովական համակարգը և նրա ըմբռնումը հայ քերականագիտության մեջ: Երրորդ մասը նվիրված է արդի հայերենի հոլովական համակարգի և նրա հայ քերականագիտության մեջ ունեցած ըմբռնումների ուսումնասիրությանն ու գիտական բնութագրումներին: Այս մասը բաղկացած է չորս գլխից, որոնցից առաջինում հետազոտված են նոր ձևավորվող, ապա նաև արդեն ձևավորված աշխարհաբարի հոլովներն ու հոլովումները և դրանց ըմբռնումները հայ ու օտար քերականություններում և այլ կարգի աշխատություններում: Առանձնացված են երկու ենթաշրջաններ. առաջին ենթաշրջանին հեղինակը հատկացրել է XVIII դարի սկզբից XIX դարի 30–40-ական թվականներն ընկած ժամանակահատվածը, երկրորդ ենթաշրջան է համարել XIX դարի կեսերից XX դարի սկիզբն ընկած միջոցը: Քննված են այդ

շրջաններին վերաբերող լեզվական համապատասխան իրողությունները և գիտական-տեսական բոլոր սկզբնաղբյուրները: Երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Մանուկ Աբեղյանի հոլովական տեսության և հայերենի հոլովների վերաբերյալ պատմական երեք հայտնի բանավեճերի, դրանց նախադրյալների, բանավեճերի ընթացքում և դրանցից հետո հնչած ու տպագրված տեսակետների, դրույթների և հակադրույթների գիտական վերլուծություններին ու բնութագրումներին: Երրորդ գլուխն ամփոփում է ժամանակակից արևելահայերենի հոլովի ու հոլովման համակարգերի քննությունը: Չորրորդ գլխում լուսաբանված են արևմտահայերենի հոլովներն ու հոլովումները և այն, թե դրանք ինչպես են ներկայացվել ու մեկնաբանվել հայաստանյան և արտերկրյա քերականություններում ու այլ բնույթի աշխատություններում: Աշխատությունը եզրափակվում է ամփոփմամբ, որտեղ 53 կետերով ներկայացված են հետազոտության արդյունքները, ընդհանրացումներն ու եզրակացությունները: Առկա է օգտագործված գրականության բավականին ընդարձակ ցանկ:

Այսքանը՝ ըստ կարգի: Այժմ՝ ըստ էության:

Դիտարկելով աշխատանքն իր ընդհանուր ամբողջության մեջ և, մանավանդ, գրախոսողի հայացքով, պետք է ասենք հետևյալը:

Ա. Աբաջյանը, իրապես, աներևակայելիորեն ծանր բեռ է վերցրել իր ուսերին: Գաղտնիք չէ, որ հայերենի հոլովները և հոլովումները ոչ թե տասնամյակներ, անգամ ոչ թե հարյուրամյակներ, այլ շուրջ 1600 տարի, սկսած Դիոնիսիոս Թրակացու հայտնի աշխատության հայերեն թարգմանությունից ու նրա մեկնություններից մինչև մեր օրերը, մշտապես եղել են հայ և օտար քերա-

կանների սևեռուն ուշադրության կենտրոնում: Մրանց մասին ստեղծվել է պատկառելի գրականություն: Հենց միայն դրա քննությունը, ներկայացումն ու գիտական բնութագիրը, որ սովել է հեղինակը, ինքնին արժանի են ամենայն դրվատանքի:

Ուսումնասիրողը, սակայն, միայն դրանով չէ, որ զբաղվել է: Նա այս բոլորի սուկական ու անդեմ նկարագրողի դերում չի հանդես գալիս, այլ ժամանակակից լեզվաբանական ըմբռնումների, մեթոդաբանական նորագույն սկզբունքների հաշվառումով ու դրանց լույսի տակ գիտականորեն բնութագրում և նորովի է գնահատում հայերենի հոլովների ու հոլովումների հետ կապված, երբևէ հնչած և արծարծված հարցադրումները, լեզվական փաստերի նախկին դիտարկումները: Նա միաժամանակ ներկայացրել է նաև լեզվի պատմություն, ավելի ստույգ՝ հիմնախնդրի ուսումնասիրության խոր ու համակողմանի, համապարփակ և սպառիչ պատմություն՝ հնագույն ժամանակներից մինչև այժմ: Եվ այդ պատմությունը գիտական է, հավաստի ու ճշմարիտ:

Աշխատության երեք մասերում ամենայն բժախնդրությամբ ու սուր հայացքով ուսումնասիրված են հայոց լեզվի պատմականորեն ընդունված շրջանաբաժանմամբ՝ հին հայերենի, միջին կամ կիլիկյան կոչված հայերենի և աշխարհաբարի երկու տարբերակների՝ արևելահայերենի ու արևմտահայերենի հոլովների պատմական զարգացման հետազոտությունը, ձևափոխությունները, իմաստափոխությունները, հարադասարարական միավորների որակական ու քանակական կազմը, հին ձևերի կորստի, նոր ձևերի ու իմաստների գոյացման, կայունացման ու կայացման հիմքերը, ակունքներն ու ուղիները:

Ուսումնասիրությունը, անկասկած, գիտական որոշակի հետաքրքրություն ու արժեք է ներկայացնում նախևառաջ իր ընդհանուր ամբողջության մեջ, սակայն հատկապես ուզում ենք առանձնացնել երրորդ «Արդի հայերենի հոլովական համակարգը և նրա ըմբռնումը հայ քերականագիտության մեջ» (էջ 253–422) վերտառությամբ մասը: Այստեղ ամենայն բժախնդրությամբ, գիտական անաչառ ու ճշմարիտ հայացքով քայլ

առ քայլ ուսումնասիրված են ժամանակակից հայերենի անվան ու դերանվան հոլովի ու հոլովակազմության համակարգային օրինաչափությունները, առանձնապես՝ հոլովական փոփոխականների ու անփոփոխականների փոխհարաբերության, դրանց տարանջատման ու տարբերակման հետ առնչվող, շատ կողմերով վիճահարույց ու մինչև վերջ տակավին չլուսաբանված, հաճախ երկակի և իրարամերժ մեկությունների տեղիք սովող ձևաբանական ու շարահյուսական երևույթները:

Նոր դիտակետով են գնահատված ու բնութագրված Մանուկ Աբեղյանի հոլովական տեսությունը և գիտական լայն արձագանք գտած երեք բանավեճերը՝ աշխարհաբարի հոլովների քանակի ու տեսակի վերաբերյալ, հոլովական նորագույն տեսությունները և շատ ու շատ այլ ածանցիկ, բայց կարևոր հարցեր:

Ժամանակագրական կարգով, ըստ ամենայնի, հետագոտված, անկողմնակալ հայացքով ու գիտականորեն բնութագրված և գնահատված են հայերենի հոլովի ու հոլովման խնդիրներին առնչվող անցյալի և ներկայի անխտիր գրեթե բոլոր աշխատանքները, եղած ըմբռնումները, տեսակետները, տեսություններն ու ուսմունքները:

Տեսական հարցադրումները, արծարծված դրույթները, ընդհանրացումներն և եզրակացություններն ունեն ամուր հիմք ու հիմնավորում, պայմանավորված են լեզվական փաստերի խոր իմացությամբ և դրանց չնախապաշարված վերլուծություններով ու գիտական գնահատումներով:

Ժամանակակից հայոց քերականագիտության մեջ շատերի կողմից շրջանառվող ավանդական յոթ հոլովի, ոմանց կողմից պաշտպանություն գտած նաև վեց հոլովի տեսությունները հեղինակը մերժում է ոչ թե սուկական հայտարարությամբ կամ, ինչպես ասում են՝ դեկլարատիվ, այլ լեզվական փաստերի, ձևաբանական և շարահյուսական բազում իրողությունների գիտական հմուտ ու համոզիչ վերլուծությունների արդյունքում: Որքան որ համոզիչ է յոթ (նաև վեց) հոլովի տեսության մերժումը, նույնքան և ավելի համոզիչ է հինգ հոլովի արեղյանական տեսության վերահաստատումը:

Աշխատության որոշակի արժանիք ենք համարում նաև այն, որ հեղինակը իրեն բնավ կաշկանդված չի զգում լեզվաբանական մտքի հեղինակությունների, անգամ ամենամեծ հեղինակությունների դիմաց և հաճախ վիճարկում է նրանց որոշ դրույթներ ու տալիս մեծ մասամբ ճշմարիտ և համոզիչ բնութագրումներ. տե՛ս, օրինակ, Արսեն Այտրնյանին, Ստեփան Պալասանյանին, Արարատ Ղարիբջանին, Գուրգեն Սևակին, Գևորգ Ջահուկյանին, Սերոբ Ղազարյանին, Պավել Շարաբխանյանին, անձամբ մեզ (և մեր հեղինակակից Հենրիկ Ավետիսյանին) վերաբերող հատվածներում եղած և այլ շատ առարկություններ, որոնք առնչվում են ուրիշ մի շարք հեղինակների ըմբռումներին, մեկնություններին ու առանձին դրույթներին:

Աշխատանքը շարադրված է ընդհանրապես քերականությանը, մասնավորապես հոլովի և հոլովման կարգերին վերաբերող սկզբնաղբյուրների խոր ու համակողմանի իմացությամբ, հայագիտական և ընդհանուր լեզվաբանական դպրոցների, ուղղությունների ժամանակակից նվաճումներն այժի առաջ ունենալով, դրանց ըստ հարկի օգտագործմամբ:

Առաջաբանում, բուն աշխատության երեք մասերի համապատասխան գլուխներում և եզրակացություններում առաջ քաշված տեսական հարցադրումները, դրանց քննությունը, մեկնություններն ու լուծումները մեծավ մասամբ գիտական են ու հիմնավոր և բխում են շարադրանքի էությունից: Ուսումնասիրության սկզբունքային դրույթներն ու հիմնադրույթները իրենց գերակշիռ մասով ընդունելի են, դրանք հիմնված են նյութը մինչև վերջին մանրամասները տիրապետող հետազոտողի քննախույզ դիտարկումների և ամուր տրամաբանության վրա:

Աշխատանքն ավելի կատարյալ ու անթերի տեսնելու ցանկությամբ կուզեինք նշել մեր մի քանի առարկություններն ու դիտողությունները: Նախապես ընդգծենք, որ մեր ասելիքը վերաբերում է խիստ մասնավոր երկու-երեք հարցերի և ամենին չի շոշափում ուսումնասիրության հիմնական ու ելակետային դրույթները, որոնք, ինչպես նշեցինք վերը, ճիշտ ենք համարում և գիտակալորեն հիմնավորված:

Հայերենի զարգացման բոլոր երեք փուլերում՝ հին հայերենում՝ համեմատաբար սակավ, միջին հայերենում՝ համեմատաբար ավելի, իսկ նոր հայերենում, մանավանդ արևելահայերենում շատ ու շատ դեպքերում միննույն անունը հատկապես սեռական-տրական հոլովում, մասամբ և բացառական, գործիական ու ներգոյական հոլովներում դրսևորել է և այսօր էլ ի հայտ է բերում հոլովակազմության տարատեսակություններ, նորագույն տերմինաբանությամբ՝ գուգաձևություններ, ինչպես՝ սեռական-տրական-ում՝ բեռ-բեռան//բեռի, գառ-գառան//գառի, թոռ-թոռան//թոռի, ծոռ-ծոռան//ծոռի, ձյուն-ձյան//ձյունի, սյուն-սյան//սյունի, դար-դարի//դարու, ձմեռ-ձմեռվա//ձմռան, Սոչի-Սոչու//Սոչիի, Լոռի-Լոռու//Լոռվա, օր-օրվա//օրի, ամիս-ամսվա//ամսի, կորուստ-կորստյան//կորստի, հույս-հուսո//հույսի, պատիվ-պատվո (պատվո պահակ) //պատվի: Կան անգամ եռաձևություններ, ինչպես՝ սկեսուր (կեսուր)-սկեսրոջ (կեսրոջ) //սկեսուրի (կեսուրի) //սկեսոր (կեսոր), տեգր-տեգրոջ/տեգրի/տեգոր և այլն: Բացառական-ում՝ եզ-եզից//եզնից, թոռ-թոռից//թոռնից, (թոռանից) առավոտ-առավոտվանից//առավոտից, ժամանակ - ժամանակվանից -//ժամանակից, աներ-աներոջից//աներից: Գործիական-ում՝ ծագում-ծագմամբ-//ծագումով, մոտեցում-մոտեցմամբ//մոտեցումով, շարժում-շարժմամբ//շարժումով, լավություն-լավությամբ//լավությունով, պետություն-պետությամբ//պետությունով: Կան նաև հնչյունափոխված և անհնչյունափոխ գուգահեռ կազմություններ, ինչպես՝ այգի-այգով//այգիով, ապակի-ապակով//ապակիով, ուղի-ուղով//ուղիով և այլն: Չուգաձևություններ կան անգամ ներգոյական հոլովի կազմության մեջ, ինչպես՝ ապակի-ապակում//ապակիում, գինի-գինում//գինիում, Շամախի-Շամախում//Շամախիում և այլն:

Առանձին հոլովների ձևակազմության, հոլովումների տիպերի ու տիպաբանական դասակարգումների խնդիրները քննելիս հեղինակը այլևայլ առիթներով անդրադարձել է նշված գուգաձևություններին: Բայց նրա դիտողությունները ցրված են աշխատության տարբեր մասերում և ամբողջական պատկերացում չեն տալիս երևույթի մասին:

Աշխատությունն, անկասկած, կշահեր, եթե առանձին մի գլուխ կամ ենթագլուխ նվիրվեր հայերենի զարգացման տարբեր փուլերում պատմականորեն գոյացած և աշխարհաբարին անցած հոլովական գուգաձևությունների քննությանը:

Բնչպես հայտնի է, ժամանակակից հայերենի հոլովական համակարգին վերաբերող երրորդ վերջին բանավեճից (Երևան, 1966 թ.) շատ չանցած՝ հաջորդաբար հրատարակվեցին Էդ. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (Երևան, 1967 թ.) և Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը» (Երևան, նույնպես 1967 թ., բայց մի քանի ամիս ավելի ուշ նախորդից) աշխատությունները: Երկու հեղինակներն էլ առաջարկեցին արդի հայերենի անվան հոլովման տիպաբանական դասակարգման նոր սկզբունքներ: Էդ. Աղայանը անվան բոլոր հոլովումները բաժանեց երկու տիպերի և դրանք կոչեց՝ ա) վերջավոր և բ) անվերջավոր: Վերջավոր հոլովումներին հատկացրեց ութ կազմություն, անվերջավոր հոլովումներին՝ վեց: Ամբողջը՝ 14 ձևեր, որոնցով, ըստ հեղինակի, արտահայտվում են ժամանակակից հայերենի անվան սեռական-տրականի հոլովական իմաստները:

Գ. Ջահուկյանը հոլովման տիպերը դասակարգում է միննույն սկզբունքով՝ միայն թե, իր սովորության համաձայն, փոխում է տիպերի անվանումները: Էդ. Աղայանի հորջորջած վերջավոր և անվերջավոր տերմինների դիմաց Գ. Ջահուկյանն առաջարկում է վերջավորությամբ հոլովում և հերթագայությամբ հոլովում բաղադրյալ անվանումները: Կատարում է նաև հավելումներ, յուրաքանչյուր տիպին ավելացնում է երկուական ձև և ստանում տասը վերջավորությամբ և ութ հերթագայությամբ ձևեր, ընդամենը՝ 18 հոլովաձև:

Էդ. Աղայանի և Գ. Ջահուկյանի դասակարգման այս սկզբունքը գտնում է համընդհանուր ճանաչում ու արտացոլվում այլևայլ բնույթի աշխատություններում: Այս 18 ձևերին, որոնց նպատակահարմար չենք համարում այստեղ անդրադառնալ, Ա. Աբաջյանն իր հերթին հավելում է ևս վեց ձև՝ հինգ հերթագայություն և մեկ վերջավորություն: Հերթագայություններն են՝ (ը)հ – տեգ(ը)ր-տեգոր, էհ – աներ/անոր, ուհ – սկեսուր-սկեսոր, իվա – տարի-տարվա և իվի – կաշի-կաշվի ձևերը: Վերջավորությունն է՝ ույս-ը՝ ամսույս ձևում, որ թեև հազվադեպ, բայց կիրառվում է: Այս ձևերը չէին նշել ոչ Էդ. Աղայանը, ոչ Գ. Ջահուկյանը: Նշված ձևերի հայտնությունը, անշուշտ, երևույթի ճանաչման ու գիտականորեն գնահատելու նոր մակարդակ է և, ինչ խոսք, դրվատանքի արժանի: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ հերթագայությամբ ձևերից երկուսի մասին [իվա-տարի-տարվա և իվի – կաշի-կաշվի] շատ ավելի վաղ՝ նախ 1968 թ. և ապա 1976 թ. խոսել է Արտաշես Պապոյանը¹: Այս մասին պետք է նշվեր, որ չի կատարվել:

Աշխատությունը հայերենի հոլովների ու հոլովումների, դրանց պատմական զարգացման և այդ բոլորի մասին հայ քերականագիտության մեջ եղած ամեն կարգի անդրադարձների քննությանը նվիրված, տեսական ու գործնական աներկբայորեն կարևոր նշանակություն ունեցող, հայագիտական հետազոտությունների շրջանակները զգալիորեն ընդարձակող մի գործ է՝ ծանրակշիռ ներդրում հայոց լեզվաբանական մտքի զարգացման ասպարեզում:

ՌՈՒԲԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

¹ Տե՛ս Ա. Պ ա պ ո յ ա ն. Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Երևան, 1976, էջ 209, տողատակի ծանոթագրությունը, տե՛ս նաև Ա. Պ ա - պ ո յ ա ն և Խ. Բ ա դ ի կ յ ա ն. Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, բուհական ձեռնարկ, Երևան, 2003, էջ 8: